«Medi-Cal»-ի ծառայությունները երեխաների և երիտասարդ չափահասների համար.

Վաղ և պարբերական ստուգումներ, ախտորոշում և բուժում

Հոգեկան առողջության ծառայություններ

Սույն ծանուցումը նախատեսված է «Medi-Cal»-ի EPSDT ծառայություններ ստանալու պահանջներին համապատասխանող երեխաների և երիտասարդ չափահասների (մինչև 21 տարեկան), ինչպես նաև վերջիններիս խնամողների և խնամակալների համար

Ի՞նչ են EPSDT ծառայությունները

- EPSDT հոգեկան առողջության ծառայությունները «Medi-Cal»-ի ծառայություններ են, որոնք կարգավորում և բարելավում են Ձեր բժշկի կամ բուժսպասարկում տրամադրող որևէ այլ սպասարկողի կողմից հայտնաբերված հոգեկան խնդիրները, նույնիսկ եթե դրանք ամբողջովին չեն վերանում: EPSDT հոգեկան առողջության ծառայությունները տրամադրվում են շրջանների հոգեկան առողջության դեպարտամենտների կողմից:
- Այդ խնդիրների թվում կարող են լինել տխրությունը, նյարդայնությունը կամ բարկությունը, որոնք դժվարացնում են Ձեր կյանքը:
- **Այս ծառայություններից օգտվելու համար Դուք պետք է մինչև 21 տարեկան լինեք և ամբողջական «Medi-Cal» ունենաք:**

Ինչպես EPSDT ծառայություններ ստանալ Ձեզ (մինչև 21 տարեկան) կամ Ձեր երեխայի համար

Ձեր բժշկին կամ կլինիկային հարցրեք EPSDT ծառայությունների մասին: Դուք կամ Ձեր երեխան կարող եք ստանալ այդ ծառայությունները, եթե Դուք և Ձեր բժիշկը կամ բուժսպասարկում տրամադրող որևէ այլ սպասարկող, կլինիկա (ինչպես «Child Health and Disability Prevention Program»-ը) կամ շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտը համաձայն եք, որ Դուք կամ Ձեր երեխան դրա կարիքն ունեք: Կարող եք նաև ուղղակի Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտ զանգահարել: Զանգն անվճար է:

EPSDT ծառայությունների տեսակները

Որոշ ծառայություններ, որոնք Դուք կարող եք ստանալ Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտի կողմից, նշված են ստորև.

- անհատական բուժում
- խմբային բուժում
- ընտանեկան բուժում
- խորհրդատվություն ճգնաժամի հարցերով
- գործի կառավարում
- հատուկ օրվա ծրագրեր
- դեղեր Ձեր հոգեկան առողջության համար

Խորհրդատվությունը և բուժումը կարող են տրամադրվել Ձեր տանը, համայնքում կամ որևէ այլ վայրում:

Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտը և Ձեր բժիշկը կամ սպասարկողը կորոշեն, թե արդյոք այն ծառայությունները, որոնք Դուք ցանկանում եք ստանալ, բժշկական առումով անհրաժեշտ են:

Շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտը *պետք է* հավանություն տա Ձեր ստանալիք EPSDT ծառայություններին:

Յուրաքանչյուր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտ անվճար հեռախոսահամար ունի, որով Դուք կարող եք զանգահարել և լրացուցիչ տեղեկություններ ստանալ կամ դիմել EPSDT հոգեկան առողջության ծառայությունների տրամադրման համար:

Ի՞նչ է EPSDT «Therapeutic Behavioral Services»-ը

«Therapeutic Behavioral Services»-ը (TBS) EPSDT հոգեկան առողջության մասնագիտացված ծառայություններ են: TBS-ն օգնում է այն երեխաներին և երիտասարդ չափահասներին, ովքեր՝

- լուրջ հուզական խնդիրներ ունեն.
- հոգեկան խնդիրների պատճառով հսկողության տակ են գտնվում կամ կարող են նման հսկողության տակ հայտնվել կամ
- վերջերս հոսպիտալացվել են հոգեկան խնդիրների պատճառով կամ հոգեբուժարան տարվելու վտանգի տակ են գտնվում:

Եթե Դուք հոգեկան առողջության այլ ծառայություններ եք ստանում, բայց շարունակում եք Ձեզ շատ տխուր, նյարդային կամ բարկացած զգալ, հնարավոր է, որ կարողանաք օգնություն ստանալ հատուկ պատրաստություն անցած հոգեկան առողջության հրահանգչի կողմից: Այդ անձը կարող է օգնել Ձեզ, երբ Դուք այնպիսի խնդիրներ ունեք, որոնք կարող են Ձեզ կատաղեցնել, վշտացնել կամ տխրեցնել: Նա կարող է Ձեր տուն գալ, այցելել խմբին կամ Ձեզ հետ միասին շրջել համայնքում ու մասնակցել այնտեղ կազմակերպվող տարբեր միջոցառումների:

Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտը կարող է բացատրել Ձեզ, թե ինչպես դիմել, որ գնահատում կատարվի և որոշվի, թե արդյոք Դուք հոգեկան առողջության ծառայությունների, այդ թվում՝ TBS-ի կարիք ունեք:

Ու՞մ հետ կարող եմ խոսել EPSDT հոգեկան առողջության ծառայությունների մասին

Ձեր բժիշկը, հոգեբանը, խորհրդատուն, սոցիալական աշխատողը կամ բուժսպասարկում կամ սոցիալական ծառայություններ տրամադրող որևէ այլ անձ կարող է օգնել Ձեզ EPSDT հոգեկան առողջության ծառայություններ գտնելու հարցում: Եթե երեխան կամ երիտասարդ չափահասը բնակվում է բուժման կամ խնամքի կարիք ունեցող անձանց կացարանում, լրացուցիչ EPSDT ծառայություններ ստանալու համար խոսեք տվյալ հաստատության անձնակազմի հետ:

Մանկական խնամքի հաստատությունում կամ հոգեծնողի խնամքի տակ գտնվող երեխաների դեպքում խոսեք երեխայի՝ դատարանի կողմից նշանակված փաստաբանի հետ: Կարող եք նաև ուղղակի Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտ զանգահարել: (Ձեր հեռախոսագրքում գտեք անվճար հեռախոսահամարը կամ զանգահարեք «Department of Health Care Services»-ի հոգեկան առողջության հարցերով Օմբուդսմանի գրասենյակ):

Ի՞նչ անեմ, եթե ես իմ շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտից չեմ ստանում իմ ուզած ծառայությունները

Դուք կարող եք բողոք ներկայացնել Ձեր շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտի դեմ, եթե նրանք մերժեն Ձեր բժշկի կամ սպասարկողի կողմից պահանջված EPSDT ծառայությունները: Կարող եք բողոք ներկայացնել նաև այն դեպքում, եթե կարծում եք, որ Ձեզ հոգեկան առողջության ծառայություններ են անհրաժեշտ, բայց Ձեր սպասարկողը կամ շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտը համաձայն չեն:

Տեղեկությունների և օգնության համար զանգահարեք շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտի անվճար հեռախոսահամարով և խոսեք խնդիրների կարգավորման (գանգատների/բողոքարկման) հարցերով համակարգիչ պաշտոնյայի հետ: Կարող եք նաև զանգահարել շրջանի հիվանդների իրավունքների պաշտպանին կամ «Department of Health Care Services»-ի հոգեկան առողջության հարցերով Օմբուդսմանի գրասենյակ:

Եթե շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտի բողոքարկման գործընթացը սահմանված ժամկետներում չկարգավորի խնդիրը, Դուք կարող եք դրա ավարտից հետո 90 օրվա ընթացքում նահանգային դատալսում պահանջել ստորև նշված եղանակներից մեկի օգնությամբ.

- **զանգահարելով՝** 1-800-952-5253 կամ TTY՝ 1-800-952-8349;
- **ֆաքս ուղարկելով՝** 916-651-5210 կամ 916-651-2789
- **գրելով՝** California Department of Social Services, State Hearings Division
  P.O. Box 944243, Mail Station 9-17-37
  Sacramento, CA 94244-2430.

Որտեղի՞ց կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել հետևյալ գրասենյակներ՝ ստորև նշված հեռախոսահամարներով.

Շրջանի հոգեկան առողջության դեպարտամենտի անվճար հեռախոսահամարով

Համարը նայեք Ձեր տեղական հեռախոսագրքում

«Department of Health Care Services»-ի հոգեկան առողջության հարցերով Օմբուդսմանի գրասենյակ

1-800-896-4042

«Department of Health Care Services»-ի կայք

www.dhcs.ca.gov

Հոգեկան առողջության և EPSDT-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել հետևյալ կայքերը համացանցում.

www.dhcs.ca.gov/services/mh
www.dhcs.ca.gov/services/mh/pages/EPSDT.aspx